

ԴԱՍՏԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԱՊԱՌՆԻՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ  
ՉԵՎԵՐԻ ԻՄԱՍՏԱԳՈՐԾԱՌՈՒԹՅԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՍԱՐԳԻՍ ԱՎԵՏՅԱՆ

Դասական հայերենում ապառնիությունն արտահայտող երեք հիմնական ձևերի (ստորադասական եղանակի, սահմանական ներկայի և *-ng դերբայ + եմ օժանդակ բայ* կառույցի) իմաստագործառության վերլուծությունը Աստվածաշնչի տեքստի հիման վրա և հունարեն բնագրի համեմատությամբ մեզ հանգեցնում է հետևյալ հիմնական եզրակացություններին. **ա)** դասական հայերենում սահմանական ներկայի գործածությունը ապառնիի իմաստով մասամբ բացատրվում է սահմանական ներկայի ընդհանուր տիպաբանական միտումով՝ երկրորդաբար արտահայտելու մոտալուտ և/կամ անխուսափելի ապառնիի իմաստ աշխարհի շատ լեզուներում, մասամբ էլ՝ հին հայերենի ածող ներհամակարգային միտումով, ըստ որի՝ սահմանական ներկան փոխարինում է ստորադասական եղանակին իր բոլոր գործառույթներով, ներառյալ սահմանական ապառնիի նշանակությամբ գործածությունը, **բ)** այդուհանդերձ, ստորադասական եղանակը հին հայերենում դեռ շարունակում է գործառել որպես ապառնիի արտահայտման առավել հաճախագործածական միջոց, այնպես որ ոչ միայն հունարենի ապառնի ժամանակը, այլև սահմանական ներկան (երբ վերջինս գործածվում է մոտալուտ և/կամ անխուսափելի ապառնիի իմաստով) դասական հայերենում հաճախ արտահայտվում են ստորադասական եղանակի միջոցով, **գ)** ինչ վերաբերում է *-ng դերբայ + եմ օժանդակ բայ* ապառնի վերլուծական կառույցի իմաստագործառության առանձնահատկություններին, համատեքստից կախված՝ այն արտահայտում է երեք հիմնական նրբիմաստներ. սպասելի ապառնի (կամ նախորոշված ապառնի), կատարվելիք գործողության/եղելության անհրաժեշտություն կամ անխուսափելիություն և ինչ-որ բան անելու մտադրություն:

**Բանալի բառեր** – *դասական հայերեն, ապառնիություն, ապառնի վերլուծական կառույց, ստորադասական եղանակ, իմաստագործառության վերլուծություն, սպասելի ապառնի (կամ նախորոշված ապառնի)*

Տիպաբանորեն հաճախադեպ երևույթ է, որ միևնույն լեզուն կարող է ունենալ ապառնիություն արտահայտող մեկից ավելի ձևեր, որոնք սովորաբար միմյանցից տարբերվում են ժամանակային հեռավորության աստիճանով, հավաստիության և ենթադրականության իմաստային հարաբերակցությամբ, ինչպես նաև տարբեր եղանակավորումային (modal) իմաստներով<sup>1</sup>: Բացի այդ, աշխարհի շատ լեզուներում ներկայի

<sup>1</sup> Հմմտ. **Ö. Dahl**, Tense and Aspect Systems, Oxford: Basil Blackwell, 1985, էջ 110, **M. Hilpert**, Germanic Future Constructions: A usage-based approach to language change, Amsterdam/Philadelphia, 2008, էջ 49 հզ.:

ձևը երկրորդաբար կարող է ցույց տալ նաև ապառնի (սովորաբար մոտալուտ և հաստատ կատարվելիք) գործողություն/եղելություն, իսկ մի շարք լեզուներում (ֆիններենում, գերմաներենում ևն) այն միաժամանակ նաև ապառնիի արտահայտման հիմնական միջոցն է<sup>2</sup>: Իհարկե կան նաև լեզուներ, որոնք ապառնիի հատուկ ձև չունեն և այդ իմաստն արտահայտում են մեկ այլ եղանակաժամանակային ձևով (ասենք, ստորադասական եղանակի կամ սահմանական ներկայի միջոցով) կամ զանազան եղանակավորումային կառույցներով: Առավել ընդունված տեսակետի համաձայն՝ հ.-ե. նախալեզուն ևս չի ունեցել ապառնի ժամանակ որպես առանձին բայական կարգ, և այդ իմաստն արտահայտվել է, մի կողմից, ցանկական եղանակային ձևի (desiderative), մյուս կողմից՝ ստորադասական եղանակի միջոցով: Ի դեպ, հոմերոսյան հունարենում և վեդայական հնդկերենում ստորադասական եղանակը գործածվում է ինչպես իր բուն եղանակային, այնպես էլ ապառնիի իմաստ արտահայտելու նպատակով<sup>3</sup>:

Սույն հոդվածում փորձ է արվում դասական հայերենի (այն է՝ V դ. հայերենի) ապառնիություն արտահայտող ձևերը իմաստագործառությանի քննության ենթարկել Աստվածաշնչի փաստական նյութի հիման վրա և հունարեն բնագրի համեմատությամբ, որը թույլ է տալիս առավել ամբողջական և ճիշտ պատկերացում կազմել հայերեն ձևերի իմաստագործառությանի առանձնահատկությունների մասին:

Հայտնի է, որ դասական հայերենում ապառնի գործողության/եղելության իմաստը քերականորեն կարող էր արտահայտվել հիմնականում երեք կերպ՝ ստորադասական եղանակի, *-ng ապառնի դերբայ + օժանդակ բայ* վերլուծական կառույցի<sup>4</sup> և սահմանական ներկայի միջո-

<sup>2</sup> Տե՛ս **B. Comrie**, Tense, Cambridge University Press, 1985, էջ 44-45:

<sup>3</sup> Տե՛ս **K. Sampanis**, The interplay between the future and the subjunctive mood in the diachrony of the Greek language // **F. Lambert, R. Allan, Th. Markopoulos** (eds.), The Greek Future and its History / Le futur grec et son histoire, Louvain-La-Neuve, Peeters, 2017, էջ 237-242: Հմմտ. նաև **J. Lyons**, Semantics, Vol. 2, Cambridge University Press, 1977, էջ 815-818:

<sup>4</sup> Թեև որոշ հետազոտողներ *-ng* դերբայը իսկական դերբայ չեն համարում, այդուհանդերձ, ընդունում են վերջինիս սերտ կապը բայական համակարգի հետ (հմմտ. **J. Klein**, Classical Armenian Morphology, In: **A. S. Kaye** (ed.), Morphologies of Asia and Africa, Vol. 1, Winona Lake, Indiana, 2007, Ch. 37, էջ 1080-1081): Բսկ Ա. Մեյեն մի կողմից գտնում է, որ *-եալ* անցյալ դերբայը միակ իսկական դերբայն է հին հայերենում, իսկ *-ng* դերբայը բնորոշում է որպես բայածական (**A. Meillet**, Altarmenisches Elementarbuch, Heidelberg, 1913, էջ 112), մյուս կողմից՝ նա նշում է, որ *-ng* բայածականը ծառայում է իբրև ապառնի դերբայ, ըստ այդմ թե՛ *-եալ դերբայ + օժանդակ բայ* և թե՛ *-ng դերբայ + օժանդակ բայ* վերլուծական կառույցները դիտում է իբրև բաղադրյալ ժամանակներ (des temps composés) (տե՛ս **A. Meillet**, Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, 2<sup>nd</sup> éd., Vienne, 1936, էջ 128-129): Իհարկե, այն հանգամանքը, որ *-ng* դերբայը, թեև «գրեթե միշտ եզակի մնայ յամենայն բանս. բայց ի կրատրականս և ի չեզոքս մարթե լինել յոգնակի» (**Ս. Բագրատունի**, Հայերեն քերականություն ի պետս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 206), թերևս վկայում է, որ *-ng դերբայ + օժանդակ բայ* կառույցը դեռևս լիովին քերականացված չէ: Բայց նկատենք, որ *-եալ դերբայ + օժանդակ բայ* կառույցի դերբայը ևս կրավորական և չեզոք իմաստով գործածվելիս կարող է հոգնակիակերտ *-ք* ստանալ, ընդ որում՝ առավել հաճախ (հմմտ. **Ս. Բագրատունի**, նշվ. աշխ., էջ 201-202):

ցով: Սակայն ապառնիի արտահայտման այդ երեք ձևերի իմաստագործառությանին փոխհարաբերության հարցը, որքանով մեզ հայտնի է, հայերենագիտության մեջ մինչև օրս լիովին լուսաբանված չէ: Եվրոպացի հայերենագետները հին հայերենի նկարագրական քերականություններում և պատմահամեմատական ուսումնասիրություններում հայանցիկ նշում են, որ *-ng ապառնի դերբայ (բայածական) + օժանդակ բայ* կառույցը ցույց է տալիս ապառնի գործողություն՝ անհրաժեշտության իմաստային երանգով<sup>5</sup>, իսկ սահմանական ներկայի ձևը ապառնիի նշանակությամբ գործածվում է կատարելի գործողության/եղելության իմաստն առավել ընդգծելու<sup>6</sup> կամ մոտալուտ ապառնիի իմաստ արտահայտելու նպատակով<sup>7</sup>: Նկատված է նաև, որ հին հայերենում ապառնի ժամանակաձևի բացակայության պայմաններում նրա իմաստը առավել հաճախ արտահայտվում է ստորադասական եղանակի, հատկապես աորիստ ստորադասականի միջոցով, որտեղից էլ գալիս է վերջինիս ոչ ճիշտ՝ «ապառնի» անվանումը հայ քերականագիտության մեջ<sup>8</sup>: Բանն այն է, որ եվրոպացի հայերենագետները ներկայի և աորիստի հիմքերից կազմված ստորադասականի ձևերը համապատասխանաբար բնորոշում են որպես *ներկա ստորադասական* և *աորիստ ստորադասական*<sup>9</sup>: Մինչդեռ հայ քերականագիտության մեջ այժմ ընդունված են *ստորադասական 1-ին ապառնի* և *ստորադասական 2-րդ ապառնի* անվանումները: Իսկ ավելի վաղ գրաբարի քերականները աորիստ ստորադասականը դիտում էին իբրև սահմանական եղանակի ապառնի՝ բուն ստորադասական համարելով միայն ներկա ստորադասականը<sup>10</sup>:

Մեր կարծիքով, *ներկա ստորադասական* և *աորիստ ստորադասական* եզրույթներն ավելի նախընտրելի են տարածամանակյա տեսանկյունից, քանի որ միանգամայն ճիշտ են արտացոլում այդ ձևերի սկզբնական իմաստային տարբերությունը՝ *անկատար կերպ – կատարյալ կերպ* հակադրությունը: Բայց մյուս կողմից՝ Աստվածաշնչի (և դասական շրջանի հայ պատմիչների գործերի) լեզվական քննությունից պարզ է դառնում, որ երբեմնի կերպային հակադրությունը արդեն V դարում այլևս գործուն օրինաչափություն չէր, թեև որոշ չափով դեռ

<sup>5</sup> Տե՛ս, օրինակ, **A. Meillet**, *Altarmenisches...*, էջ 93, 115, **H. Jensen**, *Altarmenische Grammatik*, Heidelberg, 1959, էջ 120-121, նաև՝ էջ 103, **R. Godel**, *An Introduction to the Study of Classical Armenian*, Wiesbaden, 1975, էջ 38, **J. Klein**, նշվ. աշխ., էջ 1081: Բայց չ. Ենսենը միևնույն ժամանակ գտնում է, որ անհրաժեշտության իմաստային երանգը շատ հաճախ տեղի է տալիս գուտ ապառնիության իմաստի առջև (տե՛ս **H. Jensen**, նշվ. աշխ., էջ 120):

<sup>6</sup> Տե՛ս **R. Godel**, նշվ. աշխ., էջ 38:

<sup>7</sup> Տե՛ս **H. Jensen**, նշվ. աշխ., էջ 120:

<sup>8</sup> Տե՛ս **A. Meillet**, *Altarmenisches...*, էջ 109, **Խոյնի**՝ *Esquisse...*, էջ 123, **R. Godel**, նշվ. աշխ., էջ 37-38, **H. Jensen**, նշվ. աշխ., էջ 91, 97, **R. Schmitt**, *Grammatik des Klassisch-Armenischen mit sprachvergleichenden Erläuterungen*, 2., durchgesehene Auflage, Innsbruck, 2007, էջ 133, 150:

<sup>9</sup> Տե՛ս, օրինակ, **A. Meillet**, *Altarmenisches...*, էջ 92-107, **H. Jensen**, նշվ. աշխ., էջ 91-100, 114-118, **R. Godel**, նշվ. աշխ., էջ 37-38:

<sup>10</sup> Հմմտ. **Հ. Ավետիսյան**, Գրաբարի ստորադասական եղանակը և նրա ըմբռնումը հայ քերականության պատմության մեջ, Բանբեր Երևանի համալսարանի, № 1, Եր., 1985, էջ 193-204:

պահպանվում էր, թերևս, ավանդույթի ուժով: Այսպես, մի շարք դեպքերում դեռ հստակ դրսևորվում է այդ կերպային հակադրությունը<sup>11</sup>. օրինակ՝ *Կին յորժամ ծնանիցի՝ տրտմութիւն է նմա, զի հասեալ է ժամ նորա. այլ յորժամ ծնցի զմանուկն, ո՛չ ևս յիշէ զնեղութիւնն վասն խնդութեանն, զի ծնաւ մա յոյ յաշխարհ* (Յովհ., 16.21)<sup>12</sup>: Բերված օրինակում հին հայերենի *ծնանիցի* ներկա ստորադասականի և *ծնցի* աորիստ ստորադասականի դիմաց հունարենում նույնպիսի կերպային ձևեր են. հմմտ. մի կողմից *hē gynē hotan tiktē* - Կին յորժամ ծնանիցի «կինը երբ որ ծննդաբերելիս է լինում», մյուս կողմից՝ *hotan de gennēsē to paidion ouketi mnēmoneuei...* - այլ յորժամ ծնցի զմանուկն, ո՛չ ևս յիշէ... «իսկ երբ երեխային ծնում է <վերջացնում>, այլևս չի հիշում...»: Մակայն հաճախ միննույն համատեքստում ներկա և աորիստ ստորադասականները փոխարինում են միմյանց. հմմտ. *Եւ վաղվաղակի երթա յք ասացէք աշակերտացն նորա թէ յարեալ. և ահա յառաջանալ քան զձեզ ի Գալիլեա. ա՛նդ տեսանիցէք զնա. (Մատթ., 28.7) և Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս. Մի՛ երկնչիք, երթա յք ասացէք եղբարցն իմոց՝ զի երթիցեն ի Գալիլեա՝ և ա՛նդ տեսցեն զիս (Մատթ., 28.10): Այստեղ տեսանիցէք ներկա ստորադասականի և տեսցեն աորիստ ստորադասականի դեպքում նկատի է առնված միննույն մեկանգամյա գործողությունը, և հունարենում երկու դեպքում էլ ապառնի ժամանակաձև է՝ համապատասխանաբար հոգ. 2-րդ և հոգ. 3-րդ դդ. ձևով՝ *opsesthe* «կտեսնեք» և *opsontai* «կտեսնեն»: Ահա մեկ այլ օրինակ՝ *Մատնեցէ եղբայր զեղբայր ի մա հ, և հայր՝ զորդի՛. և յառնիցեն որդիք ի վերայ հարց՝ և սպանանիցեն զնոսա* (Մատթ., 10.21): Հունարենում երեք բայերն էլ դրված են սահմանական ապառնիի ձևով՝ *paradōsei de adelphos adelphon eis thanaton...* «եղբայրը եղբորը կմատնի մահվան...», *kai epanastēsontai tekna epi goneis kai thanatōsousin autous* «երեխաները կելնեն ծնողների դեմ <ծնողներին դեմ դուրս կգան> և կսպանեն նրանց»: Ակնհայտ է նաև, որ *մատնեցէ ի մա հ, յառնիցեն և սպանանիցեն* երեք բայերի դեպքում էլ նկատի են առնված ընդհանրական գործողություններ և, ըստ այդմ, ոչ թե մեկ որոշակի եղբայր, երեխա և ծնող, այլ առհասարակ՝ եղբայրները, երեխաները և ծնողները: Արդ, եթե *անկատար – կատարյալ* կերպային հակադրությունը դասական հայերենում գործուն օրինաչափություն լիներ, երեք դեպքում էլ պետք է կիրառվեին նույնական կերպային ձևեր: Բայց քանի որ այդպես չէ, դա ևս վկայում է, որ արդեն V դարում երբեմնի կերպային հակադրությունը ստորադասական եղանակի դեպքում այլևս չէր գիտակցվում որպես գործուն օրինաչափություն: Ուստի ներ-*

<sup>11</sup> Հմմտ. նաև **A. Meillet**, *Altarmenisches...*, էջ 107, **Խույնի**՝ *Esquisse...*, էջ 123, **H. Jensen**, նշվ. աշխ., էջ 117, **Հ. Աճառյան**, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ. 4, Ա գիրք, Եր., 1959, էջ 60-61:

<sup>12</sup> Այստեղ և հետագա շարադրանքում հայերեն օրինակները բերվում են Հ. Յովհաննու Զօհրապետան վարդապետի աշխատասիրությամբ 1805 թ. Վենետիկում տպագրված Աստվածաշնչի տեքստից:

կա և աորիստ ստորադասականները հաճախ փոխարինում էին միմյանց թե՛ ապառնիի և թե՛ բուն ստորադասականին բնորոշ նշանակություններով գործածվելիս<sup>13</sup>: Նշենք նաև, որ թեև հին հայերենի ստորադասականը ծագմամբ հ.-ե. որևէ եղանակի անմիջական շարունակությունը չէ, գործառության տեսանկյունից այն համապատասխանում է հ.-ե. ստորադասականին, մասամբ էլ ըղձականին<sup>14</sup>: Մյուս կողմից՝ հին հայերենում ստորադասականը գործածվում է նաև սահմանական ապառնիի իմաստով, որը, ինչպես տեսանք, տիպաբանորեն անսովոր երևույթ չէ: Արդ, հաշվի առնելով այդ ամենը՝ մենք գերադասում ենք պահպանել *ներկա ստորադասական* և *աորիստ ստորադասական* եզրույթները: Բայց, իհարկե, դասական հայերենի համաժամանակյա կտրվածքում այդ տարբերակումը մեզ համար ավելի շուտ ձևակազմական նշանակություն ունի (այն է՝ ներկա ստորադասականը կազմվում է ներկայի հիմքից, իսկ աորիստ ստորադասականը՝ աորիստի հիմքից) և չի ենթադրում գործուն կերպային հակադրություն:

Եթե եվրոպացի հայերենագետները գոնե հպանցիկ անդրադառնում են դասական հայերենում ապառնիի արտահայտման ձևերի իմաստային առանձնահատկություններին, մեր հայ քերականները և առանձին հետազոտողները գրաբարի բայական ձևերի կիրառությունները ներկայացնելիս շատ հաճախ գրեթե ոչինչ չեն խոսում այդ մասին՝ վերոնշյալ ձևերը պարզապես դիտելով իբրև իմաստով համագոր այլընտրանքային կազմություններ: Այսպես, Ա. Բագրատունին գրք. *-ng* ապառնիի նշանակությունը ներկայացնում է արևմտահայերեն *պիտի-ով* սահմանական ապառնիի միջոցով, ինչպես՝ *սիրելոց եմ – պիտի սիրեմ, պիտի սիրուիմ* ևն<sup>15</sup>: Միննույն ժամանակ նա գտնում է, որ *-ng* ապառնին «ըստ մտացն նոյն գոլով ընդ երկրորդ նշանակութեան ապառնոյն և ստորադասականին (այն է՝ աորիստ ստորադասականի և ներկա ստորադասականին – Ս. Ա.), վարին ի տեղի միմեանց»<sup>16</sup>: Հետևաբար, ըստ Ա. Բագրատունու՝ *-ng* *ապառնին* նշանակությամբ համապատասխանում է աորիստ ստորադասականի և ներկա ստորադասականի՝ սահմանական ապառնիի իմաստով գործածությանը: Նա նաև նշում է, որ սահմանական ներկան երբեմն գործածվում է որպես սահմանական ապառնի և ստորադասական, թեև ներկայի՝ ապառնիի իմաստով և ստոր-

<sup>13</sup> Տե՛ս նաև՝ Ա. Բագրատունի, նշվ. աշխ., էջ 188, Մ. Աբեղյան, Երկեր, հ. 2, Եր., 1974, էջ 747:

<sup>14</sup> Տե՛ս Ա. Meillet, *Esquisse...*, էջ 123:

<sup>15</sup> Տե՛ս Ա. Բագրատունի, նշվ. աշխ., էջ 205:

<sup>16</sup> Ա. Բագրատունի, նշվ. աշխ., էջ 206: Ա. Բագրատունին ապառնիի և ստորադասականի երկրորդ նշանակություն ասելով նկատի ունի այդ ձևերի՝ սահմանական ապառնիի իմաստով գործածությունը, քանի որ նա դրանց առաջին նշանակությունը ներկայացնում է արևմտահայերեն ստորադասական եղանակի, իսկ երկրորդ նշանակությունը՝ *պիտի-ով* սահմանական ապառնիի միջոցով, ինչպես՝ *սիրեցից – սիրեմ, պիտի սիրեմ* և *սիրիցեմ – սիրեմ, պիտի սիրեմ* ևն, տե՛ս Ա. Բագրատունի, նշվ. աշխ., էջ 131-168-ի հարացույցային օրինակները:

րադասականի տարբեր նշանակություններով գործածությունների տարբերակում չի կատարում<sup>17</sup>: Իսկ Վ. Չալրիսյանը *-ng* ապառնիի մասին գրում է. «Ընդունելութեան ապառնին, ինչպէս նաև անցեալը եական բայի հետ մէկ տեղ կը բանին. այսպէս. *Գործելոց եւ. պիտի գործեմ... գործելոց եւ. պիտի գործես...*»<sup>18</sup>: Մեջբերված հատվածից դժվար չէ նկատել, որ վերջինս նույնպես *-ng* ապառնին իմաստով համագոր է դիտում արևմտահայերենի *պիտի*-ով սահմանական ապառնիին: Մյուս կողմից՝ նա նկատում է, որ «երբեմն *լոց* ընդունելութեան տեղ ուրիշ բայ մը կը դրի, որ նոյն ընդունելութեան ուժը ունի: *Համարս ունիմք տալ Աստուծոյ: Այսինքն, համարս տալոց եմք... Հանդերձեալ ես մեռանել: Այսինքն, մեռանելոց ես: Կայ մնայ մարդկան միանգամ մեռանել: Այսինքն, մարդիկ միանգամ մեռանելոց են*»<sup>19</sup>: Այսպիսով՝ Վ. Չալրիսյանը ևս ապաստիության և/կամ անհրաժեշտության իմաստային երանգ չի նշում ո՛չ *-ng* ապառնիի, ո՛չ էլ *ունիմ/հանդերձեալ եւ/կայ մնայ + անոքոջ դերբայ* նկարագրական վերլուծական կառույցների համար՝ վերջիններիս վերագրելով նույն *լոց* ընդունելության (այն է՝ *-ng* ապառնիի) ուժը: Եվ քանի որ նա *-ng* ապառնիի իմաստը ուղղակիորեն ներկայացնում է արևմտահայերենի *պիտի*-ով ապառնիի միջոցով, դրանից ինքնին հետևում է, որ Վ. Չալրիսյանը վերոհիշյալ վերլուծական կառույցները ևս բովանդակության պլանում դիտում է իբրև սովորական ապառնիի ձևեր: Ա. Այտընյանը նույնպես *-ng* ապառնիի *դերբայ + օժանդակ բայ* վերլուծական կառույցը համարում է սահմանական եղանակի բաղադրյալ ապառնի ժամանակ և վերջինիս իմաստը ներկայացնում արևմտահայերեն *պիտի*-ով սահմանական ապառնիի միջոցով առանց հավելյալ մեկնաբանության՝ *գործելոց եւ (պիտի գործեմ)*<sup>20</sup>: Մյուս կողմից՝ նա նաև առիստ ստորադասականն է բնորոշում որպես սահմանական եղանակի ապառնի, որն իր առաջնային նշանակությամբ դարձյալ համապատասխանում է արդի արևմտահայերենի *պիտի*-ով ապառնիին<sup>21</sup>:

Հետևաբար, Ա. Այտընյանը ևս իմաստային տարբերություն չի տեսնում *-ng* ապառնիի և առիստ ստորադասականի՝ սահմանական ապառնիի իմաստով կիրառության միջև: Ինչ վերաբերում է սահմանական ներկայի՝ ստորադասական եղանակի (այդ թվում՝ սահմանական ապառնիի) իմաստով գործածությանը, Ա. Այտընյանը նշում է, որ դա նույնիսկ «բուն ընտիր գրոց մէջ բաւական յաճախեալ ոճ է...»<sup>22</sup>, բայց այն հատկապես բնորոշ է համարում առօրյա-խոսակցական լեզվին: Նրա

<sup>17</sup> Տե՛ս Ա. Բագրատունի, նշվ. աշխ., էջ 191-192:

<sup>18</sup> Վ. Չալրիսյանց, Քերականութիւն հայկազեան, Վիեննա, 1844, էջ 58:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 229:

<sup>20</sup> Տե՛ս Ա. Այտընեան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866, մաս՝ Համառոտ տեսութիւն գրաբար հայերէն լեզուի, էջ 450:

<sup>21</sup> Տե՛ս նույն տեղը, մաս (2-րդ)՝ Քերականութիւն արդի հայերէն լեզուի, էջ 74, տողատակի ծան.:

<sup>22</sup> Նույն տեղում, մաս (2-րդ)՝ Քերականութիւն..., էջ 74:

ձևակերպմամբ՝ «...մանաւանդ դէմ առ դէմ խօսակցութեանց մէջ գործածուած այսպիսի ներկայից յաճախութեանը միտ դնելով՝ մտածել պէտք կ'ըլլայ թէ նոյնը շատ հնուց ի վեր եւ շատ սովորական կամ թէ բուն գործածականն եղած ըլլայ ընտանեկան հայերէն լեզուին»<sup>23</sup>: Ըստ Ա. Այտընյանի՝ առավել ուշագրավ է այն, որ սահմանական ներկան ստորադասականի և ապառնիի իմաստով գործածվում է ոչ միայն այն դեպքում, երբ «նախընթաց բառ մը ապառնուոյն նշանակութիւնը բաւական յայտնի կը ցուցնէ, գործիմակ *զի, որ* շղկա. *մի՛ թո՛ղ. ա՛ն. ե՛կ. այլ՝* որ աւելի նշանաւորն է, մինակ մնացած ներկայ ժամանակ մը՝ ինք իրմէն ապառնուոյ պաշտօն կը վարէ.»<sup>24</sup>: Նշենք, որ Ա. Այտընյանը «ապառնուոյ պաշտօն» ասելով նկատի ունի ոչ միայն սահմանական ապառնիի, այլև ստորադասականի զանազան (այդ թվում՝ հրավիրահորդորական (hortatory) կամ կամական (volitive), խորհրդակցական (deliberative) ստորադասականների<sup>25</sup> և հրամ. 3-րդ դ.) նշանակություններով կիրառությունները. հմմտ. *Գնա՛ մը աստի, գնա՛ մը. Ե՛կ երթամք շրջիմք. Թող անիծանէ՛. Ասե՛ մք զի իջցէ.* ևն<sup>26</sup>: Գրաբարի ժամանակակից դասագրքերում և նկարագրական քերականություններում ևս *-ng* ապառնին բնութագրվում է իբրև սահմանական եղանակի բաղադրյալ ապառնի ժամանակ, և հիմնականում գրեթե ոչինչ չի խոսվում նրա իմաստային առանձնահատկությունների մասին՝ ստորադասականի և սահմանական ներկայի միջոցով արտահայտվող ապառնիի համեմատությամբ<sup>27</sup>: Բայց, օրինակ, Է. Թումանյանը նշում է, որ *-ng* ապառնի դերբայն արտահայտում է սպասելի ապառնի գործողություն, որն անպայմանորեն պետք է տեղի ունենա<sup>28</sup>: Մինչդեռ Լ. Հովհաննիսյանը դասական գրաբարի բայական ժամանակների գործառութային քննության արդյունքում գտնում է, որ իմաստային որևէ տարբերություն չկա *-ng* ապառնիի և աորիստ ստորադասականի՝ սահմանական ապառնիի իմաստով գործածության միջև (*գրեցից – գրելոց էս*), իսկ ներկա ստորադասականի և *-ng* ապառնիի հակադրությունը (*գրիցեմ – գրելոց էս*) նա համարում է հիմնականում եղանակային (ոչ սահմանական - սահմա-

<sup>23</sup> Նույն տեղում, մաս (1-ին)՝ Նախաշաւիդ, էջ 99: Հմմտ. նաև՝ Նախաշաւիդ, էջ 114, ծան. 109 և մաս (2-րդ)՝ Քերականութիւն..., էջ 74:

<sup>24</sup> Նույն տեղում, մաս (1-ին)՝ Նախաշաւիդ, էջ 99:

<sup>25</sup> Հմմտ. **D. B. Wallace**, Greek Grammar Beyond the Basics, Grand Rapids, Michigan: Zondervan Publishing House, 1996, էջ 463-468, նաև՝ **Մ. Աբեղյան**, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 304-305:

<sup>26</sup> Տե՛ս նույն տեղը, մաս (2-րդ)՝ Քերականութիւն..., էջ 74:

<sup>27</sup> Հմմտ., օրինակ, **Մ. Աբեղյան**, Երկեր, հ. 2, էջ 721, 743-744, **Ա. Աբրահամյան**, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976, էջ 211 հջ., նաև էջ 106-107, 130-131, **Վ. Առաքելեան**, Գրաբարի քերականութիւն, Եր., 2010, էջ 193, **Պ. Շարաբխանյան**, Գրաբարի դասընթաց, Եր., 1974, էջ 213-215, **Լ. Խաչատրյան**, **Գ. Թումանյան**, Գրաբարի դասագիրք, Եր., 2004, էջ 227, 231-232, **Վ. Համբարձումյան**, Գրաբարի ձեռնարկ, Եր., 2018, էջ 239, 248 հջ., **Հ. Ավետիսյան**, **Ռ. Ղազարյան**, Գրաբարի ձեռնարկ, Եր., 2007, էջ 167-169, **Գ. Խաչատրյան**, Գրաբար, Եր., 2014, էջ 208, 232-233:

<sup>28</sup> Տե՛ս **Э. Г. Туманян**, Древнеармянский язык, М., 1971, էջ 357, 412:

նական)<sup>29</sup>: Ինչ վերաբերում է ներկայի և ստորադասականի միջոցով դրսևորվող ապառնի իմաստին, հիշյալ դասագրքերի հեղինակները սովորաբար սահմանափակվում են հպանցիկ նշումով, որ հին հայերենի սահմանական ներկան գործածվում է նաև արդի հայերենի ըղձական և ենթադրական ապառնիների նշանակությամբ, և որ գրաբարի առաջին և երկրորդ ստորադասականներն իմաստով համապատասխանում են արդի հայերենի սահմանական, ըղձական, ենթադրական և հարկադրական ապառնիներին<sup>30</sup>: Թեև Լ. Հովհաննիսյանը ներկայի՝ ապառնիի իմաստով կիրառությունները դիտարկում է բավական հանգամանորեն, բայց առավել մեծ ուշադրություն է դարձնում այն դեպքերին, երբ նույն նախադասության մեջ միաժամանակ առկա է նաև ստորադասական եղանակով կամ *-ng դերբայ + եմ օժանդակ բայ* կառույցով արտահատված ապառնի, կամ էլ երբ նախընթաց որևէ բառ ապառնիի իմաստ է ենթադրում<sup>31</sup>: Ա. Յուզբաշյանը ներկայի՝ ապառնիի իմաստով կիրառության հարցին անդրադառնում է ավելի հանգամանորեն<sup>32</sup>: Այդուհանդերձ, կարծում ենք, որոշ կարևոր մանրամասներ դեռևս լուսաբանման կարիք են զգում, որոնք լիովին հասկանալի են դառնում Աստվածաշնչի հայերեն տեքստի և հունարեն բնագրի համեմատական քննությամբ: Նախևառաջ կուզենայինք տարբերակել ներկայի և ստորադասականի՝ սահմանական ապառնիի իմաստով գործածությունների մի քանի շերտ, որոնք լեզվական տարբեր միտումների արդյունք են.

1. Սահմանական ներկան հին հայերենում կիրառվում է մոտալուտ, անխուսափելի ապառնիի իմաստով, ճիշտ ինչպես հունարեն բնագրում, և, հնարավոր է, վերջինիս ազդեցությամբ կամ առանց դրա, եթե հաշվի առնենք, որ ներկայի ձևը երկրորդային կիրառությամբ մոտալուտ ապառնիի իմաստ է արտահայտում աշխարհի շատ լեզուներում. հմմտ. *Գիտէք, զի յետ երկուց ատուրց զատիկ լինի. և Որդի մարդոյ մատնի ի խաչ էլանել* (Մատթ., 26.2): Հունարենում ևս *լինի* և *մատնի* ձևերի դիմաց ներկայի ձևեր են՝ *Oidate hoti meta dyo hēmeras to pascha ginetai kai ho huios tou anthrōpou paradidotai eis to staurōthēnai* «Գիտեք, որ երկու օրից հետո զատիկ է լինում <զատիկ է լինելու> և Մարդու Որդին մատնվում է <մատնվելու է>, որպեսզի խաչվի»: Ահա այլ օրինակներ ևս՝ *Կերիցո իք և արբցո իք քանզի վաղիւ մեռանիսք* (Եսայի, 22.13): Բնագրում ևս *մեռանիսք* ձևի դիմաց ներկա է՝ մոտալուտ ապառնիի իմաստով՝ *phagōmen kai piōmen aurion gar apothnēskomen*

<sup>29</sup> Տե՛ս Լ. Հովհաննիսյան, Դասական գրաբարի բայական ժամանակների կիրառությունը // Լեզվի և ոճի հարցեր, պր. III, Եր., 1975, էջ 316-318:

<sup>30</sup> Հմմտ. Մ. Աբեղյան, Երկեր, հ. 9, էջ 745-747, Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 121-122, 143-145, Հ. Ավետիսյան, Ռ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 22, 35, Լ. Խաչատրյան, Գ. Թոսուկյան, նշվ. աշխ., էջ 160, 173, Պ. Շարաբիսանյան, նշվ. աշխ., էջ 178-179, 187, Վ. Համբարձումյան, նշվ. աշխ., էջ 201 հջ., 222:

<sup>31</sup> Հմմտ. Լ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 278-282:

<sup>32</sup> Տե՛ս Ա. Յուզբաշյան, Գրաբարի սահմանական եղանակի ներկա ժամանակի բայաձևերը և նրանց ձևագործական հետազոտությունը, Եր., 2000, էջ 25-36:



«<Եկե՛ք> ուտենք և խմենք, քանզի վաղը **մեռնում ենք** <**մեռնելու ենք**>»: *Սուէ Յիսուս. Փոքր մեւս ևս ժամանակ ընդ ձե՛զ եւ. և երթա՛մ առ ա՛յն որ առաքեացն զիս* (Յովհ., 7.33): *Երթա՛մ ձևի դիմաց ևս բնագրում ներկա է՝ մոտալուտ ապառնիի իմաստով՝ ...kai hypagō pros ton pempSanta me «...և գնում եմ <կգնամ> ինձ ուղարկածի մոտ»:*

2. Արդեն նշվել է, որ սահմանական ապառնիի (այդ թվում՝ հին հունարենի ապառնիի) իմաստը հին հայերենում առավել հաճախ արտահայտվում է ստորադասական եղանակի միջոցով: Մյուս կողմից՝ մոտալուտ կամ անխուսափելի ապառնի ցույց տվող հունարեն ներկայի փոխարեն ևս հայերենում հաճախ ստորադասական է կիրառված՝ սահմանական ապառնիի նշանակությամբ (որն, անշուշտ, պայմանավորված է ապառնիության իմաստն առավել հստակ դարձնելու միտումով): Բերենք օրինակներ. *Եւ եթէ՛ որ ասացէ՛ զձեզ՝ թէ՛ զի՞ լուծանէք զաւանակը, ասացիք՝ թէ՛ Տեա՛նն իւրում պիտոյ է. և վաղվաղակի՛ առաքեցէ զնա այսր* (Մարկոս, 11.3): Հունարենում *առաքեցէ* ձևի դիմաց սահմանական ներկա է՝ մոտալուտ ապառնիի իմաստով՝ ...eipate hoti HO kyrios echei chreian autou kai **apostellei** auton hōde palin euthys «...ասացե՛ք, որ տիրոջը պետք է, և անմիջապես նորից նրան այստեղ է ուղարկում <կուղարկի>»: *Եւ սուէ՛ Մովսէս. Ա՛յսպէս սուէ՛ Տէր. Չհասարակ գիշերաւ ե՛ս մտից ի մէջ Եգիպտոսի...* (Ելք, 11.4-5): Հունարենում *մտից* ձևի դիմաց դարձյալ ներկա է՝ մոտալուտ ապառնիի իմաստով՝ *peri mesas nyktas egō eisporouomai eis meson Aigypou* - «...կեսգիշերին ես **մտնում, անցնում եմ** <**կմտնեմ, կանցնեմ**> Եգիպտոսի միջով»: *Եւ ահա եւ ածից ջրհեղեղ ջրոյ ի վերայ երկրի...* (Օճունդք, 6.17): Հունարենում *ածից* ձևի դիմաց ներկա է՝ մոտալուտ ապառնիի իմաստով՝ *egō de idou epagō ton kataklysmōn hydōr epi tēn gēn...* «...ահա եւ **բերում եմ** <**կբերեմ**> ջրհեղեղ երկրի վրա...»: *Փոքր մի, և ո՛չ ևս տեսանիցէք զիս...* (Յովհ., 16.16): Բնագրում *ո՛չ ևս տեսանիցէք* ձևի դիմաց դարձյալ ներկա է՝ մոտալուտ և անխուսափելի ապառնիի իմաստով՝ *Mikron kai ouketi theōreite me...* «Մի փոքր և **այլևս չեք տեսնում** <**չեք տեսնի**> ինձ...»: Երբեմն էլ վերոնշյալ երկու միտումները գործում են համատեղ, կամ նախապատվություն է տրվում մե՛րթ մեկին, մե՛րթ մյուսին: Ուստի միևնույն համատեքստում կամ նույն նախադասության մեջ մոտալուտ (և/կամ անխուսափելի) ապառնի ցույց տվող հունարեն ներկայի դիմաց հայերենում մերթ սահմանական ներկա է կիրառվում, մերթ էլ ստորադասական՝ միևնույն ապառնիի նշանակությամբ. հմմտ. *Փոքր մեւս ևս, և աշխարհս ո՛չ ևս տեսանէ զիս. բայց դուք տեսանիցէք զիս...* (Յովհ., 14.19): Հունարենում *ո՛չ ևս տեսանէ* և *տեսանիցէք* ձևերի դիմաց ներկայի ձևեր են մոտալուտ ապառնիի իմաստով՝ *eti mikron kai ho kosmos me ouketi theōrei hymeis de theōreite me...* «մի փոքր ևս, և աշխարհը **այլևս ինձ չի տեսնում** <**չի տեսնի**>, բայց դուք **տեսնում եք** <**կտեսնեք**> ինձ»:

3. Հունարենի սահմանական ապառնիի դիմաց հայերենում ներկա

է կիրառված՝ ապառնիի նշանակությամբ: Կարծում ենք՝ դա պայմանավորված է հին հայերենի ներհամակարգային աճող նոր միտումով, ըստ որի՝ սահմանական ներկան հանդես է գալիս նաև ստորադասականի գործառույթներով, այդ թվում՝ սահմանական ապառնիի նշանակությամբ: Այդ միտումը, որը հետագայում դառնում է տիրապետող, արդեն դասական հայերենում, ինչպես իրավացիորեն նկատում է Ա. Այտընյանը, նույնիսկ «բուն ընտիր գրոց մէջ բաւական յաճախեալ ոճ է...»<sup>33</sup>: Բերենք օրինակներ. *Ձա՛յս արարէք՝ և ապրէք*. (Մտունդք, 42.18): Հունարենում *ապրէք* ձևի դիմաց ապառնի է՝ *touto poiēsate kai zēsēsthe* «այս արե՛ք և ողջ կմնաք <կապրէք, կփրկվէք>»: *Մի՛ խաբիր, ո՛չ պոռնիկը... ո՛չ գողը, ո՛չ ազահը, ո՛չ արբեցողը, ո՛չ բամբասողը, և ո՛չ յափշտակողը՝ զարքայութիւնն Աստուծոյ ո՛չ ժառանգէն* (Առ Կորնթ. Ա, 6.10): Հունարենում *ո՛չ ժառանգէն* ձևի դիմաց ապառնի է՝ *mē planasthe oute pornoi... oute kleptai oute pleonektai ou methysoi ou loidoroi ouch harpages basileian theou klēronomēsousin* «մի՛ խաբվէք, ո՛չ պոռնիկները... ո՛չ գողերը, ո՛չ ազահները, ո՛չ արբեցողները, ո՛չ բամբասողները, ո՛չ հափշտակողները Աստուծո արքայությունը կժառանգեն <չեն ժառանգի>»: Ինչպես տեսնում ենք, հայերենում ոչ միայն ներկա է գործածվել ապառնիի իմաստով, այլև կրկնակի ժխտում է կիրառվել: Մինչդեռ հունարենում բայը դրական խոնարհման ձևով է, իսկ ժխտական մասնիկը դրված է միայն թվարկվող անունների հետ: *Կոչեցին զՌեբեկա՛ և սսեն ցնա. Երթա՛ս ւ ընդ առնս ընդ այսմիկ: Եւ նա սսէ. Երթա՛մ* (Մտունդք, 24.58): *Երթա՛ս* ձևի դիմաց հունարենում առկա *poreusē* ձևը ձևաբանորեն և իմաստով կարող է դիտվել թե՛ որպես աորիստ ստորադասական խորհրդակցական՝ *poreusē meta tou anthrōpou toutou* «գնա՛ս ս այս մարդու հետ», թե՛ որպես սահմանական ապառնի՝ «կգնա՛ս ս այս մարդու հետ»: Ըստ այդմ՝ հայերեն ներկայի ձևը կիրառված է խորհրդակցական ստորադասականի կամ սահմանական ապառնիի իմաստով<sup>34</sup>: Իսկ *երթա՛մ* ձևը միանշանակ սահմանական ապառնիի իմաստով է գործածված հունարեն ապառնիի դիմաց՝ *hē de eipen poreusomai* «և նա ասաց՝ կգնամ»: *Եւ սսէ Տէր ցՄովսէս. Կանխեա՛ ընդ առաւօտն և կա՛ց առաջի փարաւոնի. և ահա նա էլանէ՛ ի ջուր անդր: և սսացես ցնա*. (Ելք, 8.20): Այստեղ *էլանէ՛* ներկայի ձևը դարձյալ մոտալուտ ապառնիի իմաստով է կիրառված՝ հունարեն ապառնիի դիմաց՝ *kai idou autos exeleusetai* *epi to hydōr* «և ահա՛ նա կելնի <դեպի> ջուրը»: *Տէր տայ պատերազմ ընդ ձեր, և դուք լոեցէ՛ք* (Ելք, 14.14): *Տայ պատերազմ* ներկայի ձևը ևս գործածված է հունարեն ապառնիի իմաստով. *himōn. kyrios polemēsei* *peri hymōn...* «Տերը կպատերազմի ձեզ համար <ձեր փոխարեն>...»: *Եւ նա սսէ. Ո՛չ իջանէ որդի իմ ընդ ձեզ. զի եղբայր սորա մեռաւ. և սս միա՛յն մնացեալ է*. (Մտունդք, 42.38): Հունարենում *ո՛չ իջանէ*

<sup>33</sup> Ա. Այտընյան, նշվ. աշխ., մաս (2-րդ)՝ Քերականութիւն..., էջ 74:

<sup>34</sup> Հմմտ. արդի հայերենում նույնպիսի այլընտրանքային կիրառությունները՝ *Մի՛ հատ ծխէ՛ս* – խորհրդակցական ստորադասականի իմաստով և *Մի՛ հատ կծխէ՛ս* – ապառնիի իմաստով:

ներկայի դիմաց սահմանական ապառնի է՝ արգելանքի իմաստային երանգով՝ **ou katabēsetai** ho huios mou meth' hymōn «Նի իջնի <չպէ՛ տք է իջնի> իմ որդին ձեզ հետ»: Ի դեպ, հին հունարենի ապառնին երբեմն կարող է ցույց տալ նաև մտադրություն, սպասում, անհրաժեշտություն, որ ինչ-որ բան պետք է արվի, թեև ավելի հաճախ այդ նշանակություններով գործածվում է *mellō + ինֆինիտիվ* կառույցը<sup>35</sup>: Իսկ հին հայերենում, ինչպես ստորև կտեսնենք, այդ իմաստներն ավելի հաճախ արտահայտվում են *-ng* ապառնիի միջոցով, բայց ստորադասականը ևս կարող է կիրառվել անհրաժեշտության («պետք է») նշանակությամբ. հմմտ. *Եւ ասէ Մովսէս. Նա և դու ևս տացես մեզ որջակէզս և զոհս՝ զոր անիցեսք Տեառն Աստուծոյ մերում* (Ելք, 10.25): Այստեղ *տացես* ձևը նշանակում է «պետք է տաս», իսկ հունարենում ապառնիի ձև է գործածված այդ նույն իմաստով՝ *alla kai sy dōseis hēmin...* «բայց նաև դու պէ՛ տք է տասս մեզ...»: Նկատենք, որ *-ng* ապառնին և ստորադասականը այդ դեպքում համընկնում են իմաստով և երբեմն կողք կողքի հանդես են գալիս միևնույն նախադասության մեջ. հմմտ. *Մի՛ դատիք, զի մի դատիցիք. զի որով դատաստանաւ դատիք դատելո՛ց էք. և որով չափով չափէք չափեսցի՛ ձեզ* (Մատթ., 7.1-2): Այստեղ *դատելո՛ց էք* և *չափեսցի՛* ձևերը ցույց են տալիս ապառնի գործողություն՝ անհրաժեշտության («պետք է») իմաստային երանգով: Հունարենում երկու դեպքում էլ սահմանական ապառնի է գործածված՝ *Mē krinete hina mē krithēte en hō gar krimati krinete kritchēsthe kai en hō metrō metreite metrēthēsetai* hymin «Մի՛ դատեք, որպեսզի չդատվեք. քանզի որ դատաստանով դատեք, <նույնով> պէ՛տք է դատվեք, և ինչ չափով չափեք, <նույնով> պէ՛տք է չափվի՛ ձեզ <համար>»:

Ինչ վերաբերում է *-ng* ապառնիին, հին հայերենում, մեր դիտարկումների համաձայն, այն հանդես է գալիս երեք հիմնական նրբիմաստով՝ ցույց տալով. **ա)** նախորոշված և/կամ սպասելի ապառնի գործողություն/եղելություն, **բ)** կատարվելիք գործողության անհրաժեշտություն, անխուսափելիություն, **գ)** որևէ բան անելու մտադրություն: Իհարկե, ոչ միշտ է հնարավոր սահմանագատել նշված երեք նրբիմաստները, մանավանդ որ դրանք սերտորեն փոխկապակցված և փոխալայմանավորված են միմյանցով<sup>36</sup>: Ուստի շատ դեպքերում այդ երեք իմաստային բաղադրիչները հանդես են գալիս միասնաբար՝ մեկի կամ մյուսի գերակայությամբ: Նշենք նաև, որ *-ng* ապառնին ավելի հաճախ գործածվում է հուն. *mellō + ինֆինիտիվ* կառույցի փոխարեն, որը Վ. Գուդվինի բնորոշմամբ՝ «երբեմն ցույց է տալիս միայն ապառնիություն, երբեմն էլ մտադրություն, սպասում <ակնկալում> կամ անհրաժեշտություն»<sup>37</sup>:

<sup>35</sup> Տե՛ս **W. W. Goodwin**, *Syntax of the Moods and Tenses of the Greek Verb*, rewritten and enlarged, Ginn and Company, 1897, էջ 20:

<sup>36</sup> Հմմտ. **Մ. Ավետյան**, Արդի արևելահայերենի *կ(ը)*-ապառնիի և *-ու* ապառնիի իմաստագործառության փոխհարաբերության հարցի շուրջ // Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն, № 2, 2022, էջ 28- 31:

<sup>37</sup> **W. W. Goodwin**, նշվ. աշխ., էջ 20: Հմմտ. նաև՝ **Th. Markopoulos**, *The Future in*

Մյուս կողմից՝ Աստվածաշնչի հայ թարգմանիչները հաճախ *-ng* ապառնի են գործածել նաև հունարենի սահմանական ապառնիի և ապառնիություն արտահայտող ներկայի փոխարեն այն դեպքերում, երբ տվյալ համատեքստը ենթադրում է կատարվելիք գործողության սպասելիություն, անխուսափելիություն կամ անհրաժեշտություն: Ասվածը փորձենք լուսաբանել օրինակներով: *Լսելո՞ց էք պատերազմունս՝ և զհամբաւս պատերազմաց. զգո՞յժ լերուք՝ մի՛ խռովեսցիք, զի պա՛րտ է լինել այնմ ամենայնի...* (Մատթ., 24.6): Հունարենում *լսելո՞ց էք* ձևի դիմաց *mellō + ինֆինիտիվ* կառույց է՝ սպասելիության, նախորոշվածության իմաստով **mellēsete de akouein polemous... dei gar genesthai...** «Եվ դուք **լսելու եք** պատերազմներ <պատերազմների մասին>... քանզի <դա, այդ ամենը> պետք է տեղի ունենա...»: Այս դեպքում պատերազմների մասին լսելու սպասելիությունը և նախորոշվածությունը պայմանավորված են ...*dei gar genesthai...* «...քանզի <դա, այդ ամենը> պետք է տեղի ունենա» արտահայտությամբ: ...*զի՛ Որդի մարդոյ մատնելո՞ց է՛ ի՛ ձեռս մարդկան* (Դուկաս, 9.44): Հունարենում *մատնելո՞ց է՛ ի՛* ձեռս մարդկան (*ho gar huios tou anthrōpou mellei paradidosthai eis cheiras anthrōpōn* – «...քանզի Մարդու Որդին **մատնվելու է** մարդկանց ձեռքը»): Այստեղ Հիսուսի խաչելությունը դիտվում է որպես անխուսափելի, սպասելի գործողություն: Ի դեպ, այդ նույն միտքը մեծ մասամբ դարձյալ *-ng* ապառնիով է արտահայտված նաև այն դեպքում, երբ հունարենում սահմանական ապառնի կամ ներկա է կիրառված՝ մոտալուտ, անխուսափելի ապառնիի իմաստով. հմմտ. *Քանզի ուսուցանէր զաշակերտսն իւր՝ և ասէր ցնոսս, թէ Որդի մարդոյ մատնելո՞ց է՛ ի՛ ձեռս մարդկան...* (Մարկոս, 9.30): Հունարենում *մատնելո՞ց է՛ ի՛* ձեռս մարդկան է՝ անխուսափելի, մոտալուտ ապառնիի իմաստով՝ *HO huios tou anthrōpou paradidotai eis cheiras anthrōpōn...* «Մարդու Որդին **մատնվում է** <**մատնվելու է**> մարդկանց ձեռքը...»: *Ամէն ամէն ասե՛մ ձեզ, զի մի՛ ոմն ի՛ ձէնց մատնելոց է՛ զիս* (Յովհ., 13.21): Բնագրում *մատնելոց է՛* ձևի դիմաց սահմանական ապառնի է՝ սպասելիության, անխուսափելիության իմաստով՝ ...*heis ex hymōn paradōsei me* «...ձեզնից մեկը **մատնելու է** ինձ»: *Արդ՝ որովհետև մեռա՛ւ մանուկն, ես ընդէ՛ր պահիցեմ. միթէ՛ կարօ՞ղ իցեմ դարձուցանել զնա այսրէն. ես՛ առ նա՛ երթալոց եմ, և նա առ իս՛ n չ՛ դարձցի* (Թագ. Բ, 12.23): Բնագրում *երթալոց եմ* և *n չ՛ դարձցի* ձևերի դիմաց սահմանական ապառնիի ձևեր են՝ ...*egō poreusomai pros auton kai autos ouk anastrepsei pros me* «...ես **գնալու եմ** նրա մոտ և նա **չի վերադառնա** ինձ մոտ»: Բայց հայերենում առաջին դեպքում *-ng* ապառնի է կիրառվել, որովհետև տվյալ գործողության անխուսափելիությունն ու սպասելիությունն ակնհայտ է՝ պայմանավորված մարդու մահկանացու լինելու հանգամանքով: *Եւ ասէ՛ Տէր. Միթէ՛ թաքո՞ւստ ինչ՛ իցէ՛ յԱբբասամէ*

*ծառայէ իմմէ գոր ինչ գործելոց եմ* (Մտունք, 18.17): Հունարենում *գործելոց եմ* ձևի դիմաց ներկա է մոտալուտ և անխուսափելի ապառնիի իմաստով՝ ha egō **poiō** «ինչ որ ես **անում եմ** <**անելու եմ, պետք է անեմ**>»: *Զի կործանելոց եմք զքաղաքս զայս. զի բարձրացաւ և աղաղակ սոցա առաջի Տեառն, և առաքեաց զմեզ Տէր սաստակէ չ զսա* (Մտունք, 19.13): Այստեղ *կործանելոց եմք* ձևն ակնհայտորեն ենթադրում է կատարվելիք գործողության անխուսափելիություն, անհրաժեշտություն և նախատեսվածություն: Բնագրում ներկայի ձև է՝ մոտալուտ և անխուսափելի ապառնիի իմաստով՝ hoti **apollymen** hēmeis ton topon touton «քանզի մենք **կործանում ենք** <**կործանելու ենք, պետք է կործանենք**> այս վայրը»: *Դու զի՞ դատիս զեղբայր քո. կամ ընդէ՞ր անգոսնես զեղբայր քո. քանզի ամենեքին կալոց եմք առաջի ատենին Քրիստոսի* (Առ Հռովմ., 14.10): *Կալոց եմք* ձևը ևս կատարվելիք գործողության սպասելիություն և անխուսափելիություն է ենթադրում՝ Աստծո գալիք դատաստանով պայմանավորված: Հունարենում դարձյալ սահմանական ապառնի է՝ ...pantes gar **parastēsometha** tō bēmati tou theou «...քանզի բոլորս **կանգնելու ենք** Աստծո ատյանի առջև»: *Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս. Ամենեքին դուք՝ զայթագղելո՞ց էք յինէն յայսմ գիշերի. զի գրեալ է՝ թէ հարից զհովիւն՝ և ցրուեսցի՞ն ոչխարք հօտին* (Մատթ., 26.31): Տվյալ դեպքում *զայթագղելո՞ց էք* ձևով ենթադրվող գործողության անխուսափելիությունն ու նախորոշվածությունն ակնհայտորեն բխում է ...*զի գրեալ է թէ հարից զհովիւն՝ և ցրուեսցի՞ն ոչխարք հօտին* հատվածից: Հունարենում սահմանական ապառնի է՝ Pantes hymeis **skandalisthēsesthe** en emoi en tē nykti tautē... «Դուք ամենքդ **զայթակղվելու էք** իմ պատճառով այս գիշեր...»: Իսկ հետևյալ օրինակներում *-ng* ապառնին ակնհայտորեն մտադրության (թերևս նաև անհրաժեշտության) իմաստային երանգ է արտահայտում. հմմտ. *Եւ յաւուրն շարաթոց մինչդեռ ժողովեալ էաք բեկանել զհացն, Պաւղոս խօսէ՞ր ընդ նոսա, զի գնալոց էր ի վաղիւ անդր.* (Գործք., 20.7), որտեղ *գնալոց էր* ձևը գործածված է «մտադիր էր գնալ, պետք է գնար» նշանակությամբ: Հունարենում *mellō + ինֆինիտիվ* կառույց է՝ դերբայական դարձվածի ձևով՝ ...**mellōn exienai** tē epaurion «...**մտադիր լինելով մեկնել** <**ճանապարհվել**> հաջորդ օրը»: ...-*զի ա՛յնպէս պատուիրեալ էր՝ մինչ ինքն զցամաքաւն երթալոց էր* (Գործք., 20.13): Հունարենում *զցամաքաւն երթալոց էր* ձևի դիմաց ներկա դերբայով կազմված վերլուծական նկարագրական կառույց է՝ իմպերֆեկտի իմաստով՝ ...**ēn mellōn** autos **pezeuein** «...ինքը **մտադիր էր գնալ ցամաքով**»: *Զայս ասէր փորձելո՞ւ ՚լ գնա. այլ ինքն գիտէ՞ր զինչ առնելոց էր* (Յովհ., 6.6): Հունարենում *mellō + ինֆինիտիվ* կառույց է՝ դրված իմպերֆեկտ ժամանակաձևով՝ ...autos gar ēdei **ti emellen poiēin** «...քանզի ինքը գիտեր, թե **ինչ էր անելու** <**ինչ պետք է աներ, ինչ էր մտադիր անել**>»:

Որոշ դեպքերում *-ng* ապառնին կիրառված է հուն. *dei*՝ «*պետք է*,

անհրաժեշտ է» + *ինֆինիտիվ* կառույցի փոխարեն, ինչպես՝ *Ե՛լ այսր՝ և ցուցից քեզ զինչ լինելո՞ց է յապա՛ ժամանակս* (Յայտն., 4.1): Ահա և համապատասխան հունարեն հասվածը՝ *Anaba hōde kai deixō soi ha dei genesthai meta tauta* «<Վեր> է՛լ այստեղ և ցույց կտամ քեզ <այն բաները>, որոնք **պետք է տեղի ունենան** սրանից <այս բաներից> հետո»: Մյուս կողմից հուն. *mellō + ինֆինիտիվ* կառույցը երբեմն հայերեն թարգմանված է ոչ թե *-ոց* ապառնիի, այլ զանազան վերլուծական նկարագրական կառույցների (*հանդերձալ է/հանդերձէ + անորոշ դերբայ, կամիս + անորոշ դերբայ նն*) միջոցով, որոնք մոտալուտ և անխուսափելի ապառնիի իմաստ են արտահայտում. հմմտ. *Եւ զազանդ զոր տեսեր՝ որ է՛ր, և չէ՛ր, և հանդերձեա՛լ է ելանէ՛լ ի՞ դժոխոց՝ և ի՞ կորուստ երթալ.* (Յայտն., 17.8): Բնագրում *հանդերձեա՛լ է ելանէ՛լ* կառույցի դիմաց *mellō + ինֆինիտիվ* կառույց է՝ մոտալուտ և անխուսափելի ապառնիի իմաստով՝ *kai mellei anabainein ek tēs abyssou...* «և **ելնելու է <վեր է ելնելու>** դժոխքից...»: Ինչ վերաբերում է *կամիս + անորոշ դերբայ* կառույցին, ընդունված տեսակետի համաձայն՝ վերջինս ապառնիի իմաստով հանդես է եկել միջին հայերենի շրջանում. հմմտ. *Շարժ կամի լինել* - «Երկրաշարժ է լինելու», *Հիւանդն ստոյգ մեռանել կամի* - «Հիվանդը հաստատապես մեռնելու է» և այլն<sup>38</sup>: Սակայն որոշ անհերքելի փաստեր թույլ են տալիս ենթադրել, որ հիշյալ կառույցը արդեն V դարում երբեմն մոտալուտ և անխուսափելի ապառնիի իմաստով էր գործածվում. հմմտ. *Եւ մինչդեռ ա՛յցն կամէր լինել, աղաչէր Պառոս զամենեսեան առնուլ կերակո՛ւր...* (Գործք., 27.33): Ակնհայտ է, որ այստեղ *կամէր + անորոշ դերբայ* կառույցը մոտալուտ և սպասելի ապառնիի իմաստ է արտահայտում: Այսինքն՝ *Եւ մինչդեռ ա՛յցն կամէր լինել* հասվածը նշանակում է՝ «Եվ մինչդեռ օրը պատրաստվում էր բացվել <ուր որ է բացվելու էր>»: Հունարեն բնագրում *mellō + ինֆինիտիվ* կառույց է *Achri de hou hēmera ēmellen ginesthai* «Եվ մինչդեռ օրը **պատրաստվում էր բացվել <ուր որ է բացվելու էր>**»: Ահա մեկ այլ օրինակ՝ *Մի՛ երկնչիր՝ վասն որոյ կամիս չարչարել. ահա հանդերձէ Բանսարկուն արկանել ի՞ ձէնջ ի՞ բանտ, զի փորձիցի ք...* (Յայտն., 2.10): Հունարեն բնագրում *կամիս չարչարել* և *հանդերձէ արկանել* կառույցների դիմաց դարձյալ *mellō + ինֆինիտիվ* կառույց է. հմմտ. *mēden phobou ha melleis paschein* «մի՛ վախեցիր <այն բաներից՝ չարչարանքներից>, ինչեր **կրելու ես <պետք է կրես>**» և *idou mellei ballein ho diabolos ex hymōn eis phylakēn hina peirasthēte* «ահա՛ սատանան ձեզնից <ոմանց> **զցելու է <պատրաստվում է/մտադիր է զցել>** բանտը, որպեսզի փորձության ենթարկվեք...»: Նկատենք, որ նախադասության առաջին մասի *melleis paschein - կամիս չարչարել*՝ «չարչարվելու ես» գործողության սպասելիությունն ու անխուսափելիությունը բխում են նույն նախադասության երկրորդ

<sup>38</sup> Տե՛ս **Ա. Այտընեան**, նշվ. աշխ., մաս (2-րդ)՝ Քերականություն..., էջ 97, նաև՝ **J. Karst**, Historische Grammatik des Kilikisch-Armenischen, Strassburg, 1901, էջ 306:

մասի բովանդակությունից, այն է՝ սաստանայի՝ բանտ նետելու մտադրությունից՝ *idou mellei ballein ho diabolos ex hymōn eis phylakēn...* - «*ահա հանդերձ է Բանասարկուն արկանել ի՛ ձէնջ ի բանտ...*»: Ըստ այդմ՝ պետք է ընդունել, որ *կամիս + անորոշ դերբայ* կառույցի առաջին գործածությունները ապառնիի իմաստով հասնում են մինչև V դ.:

Այսպիսով՝ դասական հայերենում ապառնիություն արտահայտող երեք հիմնական ձևերը ուշագրավ իմաստագործառությանին առանձնահատկություններ են հանդես բերում, որոնց էությունը լիովին հասկանալի է դառնում հունարեն բնագրի համեմատությամբ: Ներկայի ձևի՝ սահմանական ապառնիի իմաստով գործածությունը պայմանավորված է մասամբ այն ընդհանուր տիպաբանական միտումով, ըստ որի՝ աշխարհի շատ լեզուներում ներկայի ձևը երկրորդաբար կարող է նաև մոտալուտ և/կամ անխուսափելի ապառնիի իմաստ արտահայտել, մասամբ էլ՝ հայերենի պատմական զարգացման ներհամակարգային միտումով, որի շնորհիվ սահմանական ներկան սկսում է լայնորեն հանդես գալ հին հայերենի ստորադասական եղանակի գործառույթներով, այդ թվում՝ սահմանական ապառնիի նշանակությամբ: Այդուհանդերձ, դասական հայերենում ստորադասական եղանակը դեռ գործառում է որպես ապառնիի արտահայտման առավել հաճախագործածական միջոց, այնպես որ մոտալուտ և/կամ անխուսափելի ապառնի ցույց տվող հունարեն ներկայի ձևի փոխարեն ևս հայերենում հաճախ ստորադասական է կիրառված՝ սահմանական ապառնիի նշանակությամբ: Իսկ *-ոց* ապառնիի իմաստագործառությանին դաշտը ընդհանուր առմամբ ներառում է հետևյալ երեք հիմնական նշանակությունները՝ **ա)** նախորոշված և/կամ սպասելի ապառնի գործողություն/եղելություն, **բ)** կատարվելիք գործողության անհրաժեշտություն, անխուսափելիություն, **գ)** որևէ բան անելու մտադրություն:

**САРГИС АВЕТЯН – Семантико-функциональное рассмотрение форм, выражающих футуральность в классическом армянском языке.** – Семантико-функциональный анализ, на основе библейского текста в сравнении с греческим оригиналом, трех основных форм (сослагательного наклонения, настоящего времени изъявительного наклонения и конструкции *-ոց причастие + ևս вспомогательный глагол*), выражающих футуральность в классическом армянском языке, подводит нас к следующим основным выводам: **а)** употребление настоящего времени изъявительного наклонения в значении будущего времени в классическом армянском языке частично объясняется общей типологической тенденцией настоящего времени вторично выразить значение ближайшего и/или неизбежного будущего в большинстве языков мира, частично же растущей внутрисистемной тенденцией в древнеармянском языке настоящего времени изъявительного наклонения заменить сослагательное наклонение во всех его функциях, включая его употребление в значении будущего времени. Поэтому значение греческого будущего времени часто передается через настоящее время в армянском языке; **б)** тем не менее, сослагательное наклонение продолжает функционировать как наиболее частый способ выразить будущее время в классическом армянском языке, так что

не только греческое будущее время, но и настоящее время (когда последнее употребляется в значении ближайшего и/или неизбежного будущего) часто передаются через сослагательное наклонение в классическом армянском языке; **в)** что касается семантико-функциональных особенностей аналитической футуральной конструкции *-ng причастие + luʻ вспомогательный глагол*, она выражает, в зависимости от контекста, три основных оттенка значения: ожидаемое будущее (или предопределенное будущее) время; необходимость или неизбежность будущих действий/событий, которые должны быть осуществлены; и намерение сделать что-то.

**Ключевые слова:** *классический армянский язык, футуральность, аналитическая футуральная конструкция, сослагательное наклонение, семантико-функциональный анализ, ожидаемое будущее (или предопределенное будущее) время*

**SARGIS AVETYAN – A Semantic-Functional Examination of Forms, Expressing Futurity in Classical Armenian.** – A semantic-functional analysis of the three main forms (subjunctive mood, present indicative, and the construction *-ng participle + luʻ auxiliary*), expressing futurity in Classical Armenian, based on the Bible text in comparison with the Greek original, leads us to the following main conclusions: **a)** the use of the present indicative in the meaning of the future tense in Classical Armenian is partly accounted for by the general typological tendency for the present indicative to express secondarily the meaning of immediate and/or inevitable future in most languages of the world, and partly, by a growing inner-systemic tendency in Old Armenian for the present indicative to replace the subjunctive mood in all its functions, including the use in future indicative sense. Therefore, the meaning of the Greek future tense is often conveyed through the present indicative in Armenian; **b)** nevertheless, the subjunctive mood still continues to function as the most frequent way to express futurity in Classical Armenian, so that not only the Greek future tense but also the present indicative (when the latter is used in the meaning of immediate and/or inevitable future) are often rendered by the subjunctive mood in Classical Armenian; **c)** as to the semantic-functional peculiarities of the analytical future construction *-ng participle + luʻ auxiliary*, it expresses, depending on the context, three main nuances of meaning: an expected future (or predestined future); the necessity or inevitability of the future action/event to be fulfilled; and the intention to do something.

**Key Words:** *Classical Armenian, futurity, the analytical future construction, subjunctive mood, a semantic-functional analysis, an expected future (predestined future)*